Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
մարտի 10-ի N 271 - Ն որոշման

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

«Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցելու գնման ընթացակարգի մասնակցության

ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐԻ ՈՒՂԵԿՑՈՂ ԳՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ

[ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե]

Նախաորակավորված հայտատուի անվանումը և հասցեն

Հարգելի պարոն/տիկին,

1. Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետության կառավարությունը բարեփոխումներ է իրականացրել ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում՝ արձանագրելով նշանակալի արդյունքներ: Այս ոլորտում պետական - մասնավոր գործընկերության (ՊՄԳ) փորձի առումով Հայաստանի Հանրապետությունը տարածաշրջանում առաջատարներից մեկն է: Մասնավոր օպերատորների հետ կնքվել են կառավարման ու վարձակալության պայմանագրեր և կատարվել են ջրային ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված մեծածավալ ներդրումներ: Արդյունքում, արձանագրվել է սպասարկման որակի նշանակալի բարելավում, ընկերությունների գործառնական ծախսերի կրճատում և եկամուտների աճ:

2. Սույն հրավերի առարկա է հանդիսանում «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը վարձակալությամբ փոխանցումն է: Ներկայումս գործող բոլոր ՊՄԳ պայմանագրերի ժամկետը լրանում է 2016 թվականին և նախատասվում է համապատասխան ծառայությունների մատուցումն իրականացնել մեկ վարձակալական պայմանագրի շրջանակում: Նախաորակավորման ընթացակարգի արդյունքում, Ձեր ընկերությունը/կոնսորցիումը ընդգրկվել է նախաորակավորված հայտատուների ցուցակում:

3. Սույնով ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն հրավիրում է առաջարկներ ներկայացնել «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի օգտագործման իրավունքը 15 տարով վարձակալությամբ փոխանցելու նպատակով:

4. Հայտեր ներկայացնելու հրավերը (Հրավերը) ուղարկվել է նախաորակավորված հետևյալ հայտատուներին՝

(A)

(B)

(C)

(D)

Հայտերը պետք է ներկայացվեն ներքոհիշյալ հասցեով՝ մինչև [ամսաթիվ] ժամը [. . .]:

5. Հայտատուի ընտրությունը կատարվելու է ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան՝ ՀՀ կառավարության 2016 թ. մարտի 10-ի թիվ xx որոշմամբ սահմանված կարգով:

6. Խնդրում ենք հաշվի առնել, որ դուք իրավունք չունեք փոխանցելու սույն Հրավերը մեկ այլ ընկերության և չեք կարող կոնսորցիում կազմել նախաորակավորված հայտատուների ցանկում ընդգրկված մասնակցի հետ:

7. Մրցութային փաստաթղթերի փաթեթը ներառում է՝

(i) Հայտեր ներկայացնելու հրավեր (Հրավեր).

(ii) Հրավերի Հավելված Ա – վարձակալության պայմանագրի նախագիծ, որը ներառում է՝

a) Գործարքի ձևը,

b) Պայմանագրի ընդհանուր պայմանները և

c) Պայմանագրի ընդհանուր պայմանների հավելվածները.

(iii) Հրավերի Հավելված Բ - Հայտի ապահովության ձև.

(iv) Հրավերի Հավելված Գ – Գնային առաջարկի ձև.

(v) Հրավերի Հավելված Դ - Հայտի ներկայացման գրության ձև.

(vi) Հրավերի Հավելված Ե – Տեղեկությունների տրամադրման ձևաչափեր.

(vii) Հրավերի Հավելված Զ – Ինքնակենսագրության (CV) ձև.

(viii) Հրավերի Հավելված Է – Ֆինանսական մոդելի ներկայացման ձևաչափ:

Սույն Հրավերին կից ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թ. մարտի 9-ի թիվ 41Ա որոշմամբ հաստատված «Ապագա վարձակալ ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման N — լիցենզիայի պայմանները»:

8. Խնդրում ենք տեղեկացնել, որ

(i) Ստացել եք սույն հրավերը,

(ii) և մտադիր եք արդյոք ներկայացնել Հայտը թե՞ ոչ:

Հարգանքով՝

ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ